<<ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԵՐՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2023

Զարգացման ծրագրի բովանդակությունը

Ներածություն ---------- 4

1.Հաստատության գործունեությունը ---------- 8

1.1 Դպրոցի կրթական կարիքների բավարարման նկարագիրը ---------- 8

1.2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին ---------- 9

1.3 Դպրոցի գործունեության համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին
և հնարավորություններին ---------- 11

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը ---------- 13

2.1 Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան ---------- 13

2.2 Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը ----------14

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները ---------- 16

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ---------- 23

2.5 Հաստատության ուսումնական միջավայրը ---------- 25

2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները ---------- 29

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը ---------- 31

2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները ---------- 35

2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները ---------- 36

2.10 Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (ամփոփ վերլուծություն) ---------- 38

3.Նպատակների և խնդիրների սահմանումը ---------- 46

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները---------- 48

5.Ակնկալվող արդյունքները ---------- 65

6.Արդյունքների գնահատման չափանիշները ---------- 66

7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի նպատակների և դրանցից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները ---------- 71

8. Վերահսկողության մեխանիզմները ---------- 84

Եզրափակում ---------- 86

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թվականների զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են.

1. Դպրոցի ներքին գործունեության 2018-2019, 2019-2020, 2020-2021, 2021-2022 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.08.2021 թվականի N 1363-Ա որոշումը՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մասին»,

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.07.2022 թվականի N 1174-Ա որոշումը՝ <<Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին,

4. «Եղեգնաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա ծրագիրը»,

5. Մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները,

6. Դպրոցում առկա հիմնախնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի համայնքային կարիքները:

Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել դպրոցի առաքելությունը, իմանալ ինչ է ծրագիրը և պլանավորումը.

<<Առաքելությունն>> այն է, ինչի իրականացմանը կոչված է տվյալ հաստատությունը: Այն ունի շարունակական բնույթ:

<<Ծրագիրը>> պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը:

ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները սահմանում է «Կրթության զարգացման պետական ծրագիրը»:

Ծրագրի հիմնամեխը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարվում է գործունեության պլանավորում, որը միջոցառումների ժամկետները և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու և ծրագրի բյուջեն կազմելու գործիք է:

Դպրոցի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար բաժանվում է հետևյալ փուլերի՝

Ա) Դպրոցի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրի նպատակների և խնդիրների սահմանում,

Բ) Ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում,

Գ) Ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում:

ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրի մշակման համար կատարված են հետևյալ հաջորդական քայլերը՝

Ա) Նկարագրվել են այն կարիքները, որոնք բավարարելու է դպրոցը,

Բ) Վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել են եղած հիմնախնդիրները,

Գ) Սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,

Դ) Սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,

Ե) Սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները:

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ դպրոցի հիմնական առաքելությունը շրջանավարտների որակյալ կրթությունն ապահովելն է:

Ծրագիրը մշակվել է համապարփակ վերլուծության արդյունքում՝ կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշերի հիման վրա:

Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել Վերնաշենի միջնակարգ դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ կայացած հանդիպումների ժամանակ արված առաջարկություններն ու բարձրացված հարցերը, որոնք ներառվել են զարգացման ծրագրի տարբեր հատվածներում:

Մշակման ընթացքում խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել ոլորտի մասնագետների, կառավարման խորհդի անդամների, շրջանավարտների, ինչպես նաև համայնքի այլ դերակատարների հետ՝ բացահայտելու լրացուցիչ կարիքները և կրթության ժամանակակից միտումները:

Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին, ռիսկերի

արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել են հնարավոր լուծումներ ու գործողություններ:

Ծրագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանով հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափին համապատասխան:

1.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Դպրոցի կրթական կարիքների բավարարման նկարագիրը

Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը՝ կատարելագործվում, մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է.

ա) Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ,

բ) Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ,

գ) Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել,

դ) Երաշխավորել սովորողների ազատությունը որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի: Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն,

ե) Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար,

զ) Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողությունը,

է) Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը

(այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ),

ը) Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Այսպիսով՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով անհրաժեշտ է ձևավորել

- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեքներ կրող,
- հայրենասեր,
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ,
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները:

1.2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցի գործունեությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության ծրագրի կրթության ոլորտի քաղաքականությանն ու գերակայություններին: Մասնավորապես՝

ա) Կրթության զարգացումը գերակա խնդիր է, որի շնորհիվ միայն հնարավոր է հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության,

բ) Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական

երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը,

գ) Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցված է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին,

դ) Առանցքային են ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և կրթական ծրագրերի արդիականացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումն ու վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգերում, «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը,

ե) Խրախուսվում է նաև կրթությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Դպրոցում իրենց գործուն և արագ արձագանքն են գտնում հանրակրթության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված փոփոխությունները, որոնց հիմնաքարը մինչև 2026 թվականը հանրակրթության նոր չափորոշիչների ամբողջական ներդրումն է լինելու դպրոցի բոլոր դասարաններում՝ ապահովելով դպրոցական արդիական ու հագեցած ենթակառուցվածքի, ներառական ու զարգացնող միջավայրի, կրթական որակյալ բովանդակության, բարձրորակ ուսուցչական համակազմի և դպրոցի թափանցիկ ու արդյունավետ կառավարման ամբողջությունը:

Վերը նկարագրված քայլերի արդյունքում է, որ դպրոցն իր գործունեությամբ բավարարում է պետության, համայնքի և այլ շահառու խմբերի կարիքները՝ նպաստելով նոր մարտահրավերներին դիմակայելու լայն հնարավորությունների ստեղծմանը:

1.3 Դպրոցի գործունեության համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին.

1905 թվականին՝ ներկայիս ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղում, <<Սրկղոնք>> գետի ձախափնյա թաղամասում, հիմնադրվել է Վերնաշեն գյուղի ութամյա դպրոցը: Դպրոցի նոր շենքը կառուցվել է 1974 թվականին՝ ներկայիս ՀՀ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր, գյուղ Վերնաշեն, փողոց 8, շենք 2 հասցեում: 1978 թվականին դպրոցը ստացել է միջնակարգ դպրոցի կարգավիճակ:

<<ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի կանոնադրությունը ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ հաստավել է 2002 թվականին, որից հետո նոր խմբագրությամբ հաստավել է 2011 թվականի մարտի 21-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.03.2011 թվականի N 23 որոշում) և 2017 թվականի հոկտեմբերի 22-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.10.2017 թվականի N 68 որոշում):

2017 թվականի հոկտեմբերի 22-ին նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ 2021 թվականի փետրվարի 9-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.02.2021 թվականի N 16-Ա որոշում) և 2022 թվականի հոկտեմբերի 14-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 14.10.2022 թվականի N 202-Ա որոշում):

Ուսումնական հաստատությունը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003 թվականի հունվարի 17-ին (գրանցման համար 65.210.00423, վկայական N 03 Ա 058346):

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 16-ի N 285-Ա/Ք հրամանով տրված Ա N 0853, Ա N 0844 և Ա N 0689 լիցենզիաների՝ դպրոցն իրավունք է ստացել իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

-Տարրական հանրակրթական ծրագիր՝ 100 սահմանային տեղով,

-Հիմնական հանրակրթական ծրագիր՝ 145 սահմանային տեղով,

-Միջնակարգ հանրակրթական ծրագիր ՝ 75 սահմանային տեղով:

Դպրոցն ունի անշարժ գույքի սեփականության վկայական՝ տրված 2010 թվականի սեպտեմբերի 10-ին. վկայականի համարը՝ N 2775587:

Դպրոցի շենքը տիպային է. բաղկացած է մեկ մասնաշենքից՝ 1810 քմ ընդհանուր մակերեսով: Շենքը հիմնանորոգվել է 2007 թվականին:

Դպրոցն ունի հարակից հողամաս՝ ընդհանուր 3190 քմ տարածքով, որից 2490 քմ տարածքը դեկորատիվ բուսական հողամաս է, իսկ 700 քմ տարածքը՝ մրգատու այգի:

2022-2023 ուսումնական տարում դպրոցը համալրված է 12 դասարանով, որտեղ սովորում են թվով 96 աշակերտներ:

Դպրոցում աշխատում են թվով 23 ուսուցիչներ, որոնցից 20-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 3-ը՝ միջին մասնագիտական:

Դպրոցն աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն գյուղական բնակավայրում հաշվառված են թվով 1278 բնակիչներ: Բնակավայրում փաստացի բնակվող դպրոցահասակ երեխաների թիվը 115 է, որոնցից 96-ը հաճախում են Վերնաշենի միջնակարգ դպրոց, իսկ 19-ը՝ մարզկենտրոն Եղեգնաձորի կամ հարևան Գլաձոր բնակավայրի հանրակրթական ուսումնական հաստատություններ: Նախադպրոցական տարիքի երեխաների թիվը 41 է, որից՝ 5 տարեկան երեխաները 7-ն են, 6 տարեկանները՝ 8-ը:

Համեմատելով <<ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի վերը նկարագրված ենթակառուցվածքային և կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորությունները բնակավայրի մարդկային ռեսուրսների և կանխատեսվող

պահանջների հետ՝ կարող ենք համոզմունք հայտնել, որ բնակավայրում գործող հանրակրթական դպրոցը առավել քան պատրաստ է շահառու խմբերին հանրակրթության ոլորտում մատուցելու պատշաճ ծառայություններ:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.1 Հաստատության շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքը տիպային է. բաղկացած է մեկ մասնաշենքից՝ **1810** քմ ընդհանուր մակերեսով:

Ուսումնական հաստատությունում առկա են հետևյալ շենքային պայմաններն ու հարմարությունները.

. **Առանձնասենյակներ 11**՝ ընդհանուր 380 քմ մակերեսով,

. **Դասարաններ 13**՝ ընդհանուր 590 քմ մակերեսով,

. **Առարկայական լսարաններ 3**՝ ընդհանուր 86 քմ մակերեսով,

. **Լաբորատորիա(ներ) (ֆիզիկա, քիմիա) 2**՝ ընդհանուր 35 քմ մակերեսով,

. **Արհեստանոց(ներ) 1**՝ ընդհանուր 87 քմ մակերեսով,

. **Մարզադահլիճ(ներ) 1**՝ ընդհանուր 180 քմ մակերեսով,

. **Գրադարան(ներ) 1**՝ ընդհանուր 15 քմ մակերեսով,

. **Ճաշարան 1**՝ ընդհանուր 80 քմ մակերեսով,

.**Հանդերձարան(ներ) 2**՝ ընդհանուր 16 քմ մակերեսով,

.**Զուգարան(ներ) 3**՝ ընդհանուր 36.6 քմ մակերեսով,

. **Մարզահրապարակ (ներ) 1՝** ընդհանուր 3000 քմ մակերեսով,

. Այլ պայմաններ ու հնարավորություններ:

Շենքի ջեռուցվող ընդհանուր մակերեսը կազմում է 1766.3 քմ: Ջեռուցման տեսակը լոկալ է: Ջեռուցման օրերի թիվը 125 է:

Շենքի ներսի մաքրվող մակերեսը 1766.3 քմ է, դրսի մաքրվող մակերեսը՝ 1400 քմ, սանհանգույցների մաքրվող մակերեսը՝ 36.6 քմ:

Ուսումնական հաստատությունում առկա են 11 միավոր համակարգիչներ, 3 միավոր համակարգչային և այլ տեխնիկա:

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:

Հաստատության բոլոր դասասենյակները ձևավորված են և կահավորված:

Շենքային բավականաչափ լավ պայմաններին զուգահեռ, հաստատությունն ունի դպրոցական գույքի և նյութերի թարմացման կարիք՝ սկսած դասասենյակային գույքից (սեղան, աթոռ և այլն), ընդհուպ մինչև առարկայական լսարանների և լաբորատորիաների անհրաժեշտ գույքն ու նյութերը:

2.2 Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի և մարզպետի աշխատակազմի կայքում: Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են.

. **աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,**

. կոմունալ վճարներ,

. գրասենյակային և տնտեսական ապրանքներ,

. գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր,

. հատուկ նպատակային ծախսեր,

. տեղեկատվական ծառայություն,

. կենցաղային և հանրային սնունդ:

	2018-2019	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023
Ֆինանսական ցուցանիշներ	32627.9	32753.7	39414.8	42669.9	45780.7

2018-2022 թվականների ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձի և կոմունալ ծախսերի վճարման համար:

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կատարված ծախսերը չեն շեղվել պլանային ցուցանիշներից և եղել են արդյունավետ ու նպատակային:

Ըստ հաստատության 2022-2023 ուսումնական տարվա (2-րդ կիսամյակ) տարիֆիկացիոն ցուցակի՝ հաստատության թվով 32 աշխատողների, 30,23 միավոր դրույքի համար, ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 3.610.735 ՀՀ դրամ, որից՝

- 1 **վարչական աշխատողի**, 1 միավոր դրույքի համար՝ 210.000 ՀՀ դրամ,

- 16 **մանկավարժական աշխատողների**, 16.73 միավոր դրույքի համար՝ 2.060.571 ՀՀ դրամ,

- 3 **մանկավարժական հաստիքների (**Զինղեկ, ԴԱԿ, ուսուցչի օգնական**)**, 2.75 միավոր դրույքի համար՝ 348.413 ՀՀ դրամ,

- **հաշվապահի** 1 միավոր դրույքի համար՝ 132.000 ՀՀ դրամ,

- **ուսումնաօժանդակ անձնակազմի** 4 աշխատողների, 1.75 միավոր դրույքի

համար՝ 177.813 ՀՀ դրամ,

- **սպասարկող անձնակազմի** 5 աշխատողների, 5 միավոր դրույքի համար՝ 486.500 ՀՀ դրամ,

- **խոհարարի** 0.5 միավոր դրույքի համար՝ 52.000 ՀՀ դրամ,

- **գազի օպերատորի** (սեզոնային 4 ամիս) 1.5 միավոր դրույքի համար՝ 143.438 ՀՀ դրամ:

Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում. գույքագրում կատարվում է յուրաքանչյուր տարի:

Դպրոցի տվյալ ուսումնական տարվա բյուջեի նախագիծը՝ ըստ դպրոցի կանոնադրության պահանջի, ներկայացվում է կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներին՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը:

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 27-րդ կետի համաձայն՝ դպրոցի կառավարման մարմիններն են

1) ***հիմնադիրը,***

2) ***Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը (լիազորված մարմին).***

3) ***կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.***

4) ***գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:***

Հաստատությունում իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Անհրաժեշտ

է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման լիազոր մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 67-րդ կետով ամրագրված է. «Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են ***խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ***: Կարող են ձևավորվել նաև այլ ***խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ***:»:

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմվել է դպրոցի կողմից՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվել են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:

Խորհուրդներն ունեն իրական ինքնավարություն, ազատ են իրենց գործողություններում՝ պահպանում են իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Դպրոցի տնօրենը ակտիվ և մշտական համագործակցության մեջ է գտնվում դպրոցի կառավարման խորհրդի հետ. մասնավորապես՝

Դպրոցի խորհուրդը՝

- Իրականացնում է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն,
- Հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները,
- քննարկում և հավանություն է տալիս դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին,
- տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկուսցիոն ցուցակները, հավանություն է տալիս և ներկայացնում համապատասխան լիազորված մարմին,
- քննարկում է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները,
- քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները,
- վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝ քննարկելով դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները,
- հաստատում է իր աշխատակարգը և ընտրում խորհրդի նախագահ.
- իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Դպրոցի տնօրենը՝

- խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը,

ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը,

- կազմում է դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաստատության Խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազորված մարմին,
- աջակցում է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին,
- մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է հաստատության ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները,
- մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով,
- մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները» և աշխատողների «Ներքին կարգապահական կանոնները»,
- համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի, այդ թվում՝ առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը,
- խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը,
- իրականացնում է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների նկատմամբ:

Դպրոցի տնօրենը ժամանակին միջոցներ է ձեռնարկում խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով.

1. Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպվում են սեմինարներ՝ դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար,
2. Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպվում են սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով,
3. Ձեռնարկվում են միջոցներ առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը զարգացնելու ուղղությամբ՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

Դպրոցի տնօրենը համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

<u>Կառավարման խորհուրդը</u> գործում է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում՝ պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

<u>Մանկավարժական խորհուրդը</u> պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները. խորհրդի նիստերը գումարվում են հնարավորինս լայն մասնակցությամբ: Խորհուրդն անհրաժեշտաբար քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

<u>Աշակերտական խորհուրդը</u> հնարավորինս ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս առաջարկություններով, որոնք վերաբերվում են ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին, կեցվածքին կամ այլ խնդիրներին: Ըստ անհրաժեշտության կազմակերպում է տարբեր հանդիպումներ, տարաբնույթ ճանաչողական այցեր:

Կարևորելով աշակերտական ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ. լսում են նրանց, ստեղծված խնդիրներին տալիս են համապատասխան լուծումներ:

Անչափ կարևորվում է աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակացական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում է նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

<u>Ծնողական խորհուրդը</u> մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում է նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպում է ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարանային վայրեր, իրականացնում այլ միջոցառումներ:

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները ցուցադրված են ստորև ներկայացվող ***Գծապատկեր 1-ում***:



2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում է համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը, մասնակցում է համատեղ շաբաթօրյակներին, պետական տոնացույցի միջոցառումներին, համայնքի ղեկավարի և վարչական ղեկավարի հետ հանդիպումներին:

Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր անցկացնելիս: Դպրոցի աշակերտները իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար մշտապես տարվում են համագործակցված աշխատանքներ առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:

Դպրոցը ակտիվորեն համագործակցում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, <<Դասավանդի՛ր Հայաստան>> հիմնադրամի, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, Եղեգնաձորի մարզային գրադարանի, պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների, համայնքապետարանի և այլ շահառու կազմակերպությունների և կառույցների հետ:

Ստորև ներկայացված ***<u>Գծապատկեր 2-ը</u>*** արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:

Գծապատկեր 2

Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ



2.5 Հաստատության ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սովորողին կրթում և դաստիարակչական ազդեցություն է գործում նրա վրա:

Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ:

Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, խրախուսող, մոտիվացնող ուսումնական միջավայր: Ուստի, դպրոցի զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը:

Ներքին գնահատման համար կատարված հարցումներն ապացուցում են, որ դպրոցում սովորողների ուսումնառության համար ստեղծված է առողջ միջավայր: Երեխաները, ինչպես և նրանց ծնողները, համոզված են, որ դպրոցում իրենք լավ պաշտպանված են. դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Մշտական հոգածության առարկա է սովորողների առողջության պահպանումը: Խստորեն վերահսկվում են բացակայությունները: Անհրաժեշտության դեպքում դասարանը օպերատիվ կերպով անցնում է հեռավար ուսուցման՝ ըստ կարգի: Պահպանվում են դպրոցի սանիտարահիգենիկ կանոնները և միջոցառումները:

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է:

Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Ուսումնական հարմարավետ միջավայրի ձևավորման համար իրատեսական են հետևյալ չափանիշները՝

1. **Դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված են նոր գույքով,**
2. **Դպրոցը ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,**
3. **Դպրոցում ձևավորված են հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,**
4. **Դպրոցում ձևավորված են սովորեցնելու և սովորելու ավանդույթներ (մշակույթ),**
5. **Դպրոցում բացառված են հալածանքը (Բուլիինգ), օտարումը և բռնությունը:**

Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը նկարագրված է դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլված է ուսումնական պլանում և իրականացվում է ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում: Դրա արդյունքում աշակերտները

կունենան ուսումնական հաջողություններ, որոնք տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը կազմվում է ըստ սովորողների և ոչ թե՝ ուսուցիչների կարիքների:

Այս առումով կարևորում ենք ուսումնական պլանի համապատասխանեցումը դպրոցում սովորողների կարիքներին:

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է:

Դպրոցը քայլեր է ձեռնարկում սովորողների **դաստիարակության համակարգի** կատարելագործման ուղղությամբ՝

1. **Ծնողների ուսուցում կազմակերպելով,**
2. **Առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,**
3. **Արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություններ տալով,**
4. **Ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,**
5. **Ծնող-դպրոց կապը հզորացնելով:**

Ելնելով վերոգրյալից՝ **նպատակ ունենք** բարելավելու դպրոցում իրականացվող **դաստիարակչական աշխատանքները**՝ մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ, դպրոցում զարգացնելով ներառական կրթությունը, ներմուծելով կրթական արդի ծրագրեր, այդ թվում՝ այլընտրանքային և միջազգային:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների

և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացի առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է, որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

Յուրաքանչյուր՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնավորվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորող իրավունք ունի օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և բոլոր այլ ծառայություններից անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատությունից:

Ելնելով վերոնշյալ դրույթից՝ ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների անհրաժեշտությունից, նախատեսում ենք ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

- **բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում,**
- **հավասար հնարավորությունների ստեղծում յուրաքանչյուր երեխայի համար,**
- **կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի համապատասխանեցում ԿԱՊԿՈԻ աշակերտների կարիքներին,**
- **երեխայի կրթական ծրագրերի մատչելիության ապահովում,**
- **ուսուցիչների վերապատրաստման ապահովում:**

2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մանկավարժական պոտենցիալը անհրաժեշտ է գնահատել, ինչի համար պետք է ունենալ գնահատման չափանիշներ: Ուսուցչին կարելի է գնահատել ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման:

Գնահատման չափանիշներ կարող են լինել, օրինակ՝

1. Բարձրագույն մասնագիտական կրթությունը,
2. Աշխատանքի 5 և ավելի տարվա փորձը,
3. Ուսուցման գործընթացում կիրառվող դասավանդման այնպիսի մեթոդները և մոտեցումները, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ,
4. Գնահատման մեթոդաբանության իմացությունը և նրա կիրառման կարողությունը,
5. Առարկայական չափորոշիչների իմացությունը և դասավանդելիս այդ չափորոշիչներով առաջնորդվելու ունակությունը,
6. Աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունը և պարտաճանաչությունը, դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը նպաստելը, գոյություն ունեցող փորձի ուսումնասիրությունը և սեփական փորձի տարածումը,
7. Տարիքային հոգեբանության իմացությունը,
8. Երեխաների իրավունքներին ծանոթ լինելը և դրանց հարգանքով վերաբերվելը,
9. Մանկավարժական էթիկայի կանոնների պահպանումը:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով, ինչպես նաև խրախուսվել և խրախուսվելու են կրթության և մանկավարժության բնագավառներում հաջողություններ ձեռք բերած ուսուցիչները: Մշտական բնույթ են կրում փոխադարձ դասալսումները, բաց դասերը, դաս-միջոցառումները:

Դպրոցում գործում են տարրական, հումանիտար, բնագիտամաթեմատիկական և պատմաաշխարհագրական առարկաների մեթոդմիավորումները՝ ըստ իրենց գործառույթների:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը և աշխատակազմի արժևորման, խրախուսման ու ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը համարում ենք դպրոցի *ռազմավարություններից մեկը:* Այն դիտարկում ենք հետևյալ քայլերի ամբողջության համատեքստում՝

1) Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրություն և կիրառում պրակտիկ աշխատանքում,

2) Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին ատեստավորման գործընթացի նախապատրաստում,

3) Մասնագիտական, մանկավարժական, մեթոդական խորհրդակցությունների, խորհրդատվությունների կազմակերպում,

4) Մանկավարժության նորագույն նվաճումներն ուսուցչին հասանելի դարձնելու գործիքակազմերի և մեխանիզմների մշակում, սեմինարների կազմակերպում, մանկավարժական մեթոդական ընթերցումների ապահովում,

5) Ուսուցիչների որակավորման բարձացմանն ուղղված հնարավոր բոլոր միջոցների ձեռնարկում,

6) Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացի ընդլայնում:

Ուսուցիչները ներկայումս կարողանում են օգտվել ՏՀՏ և այլ տեխնոլոգիաների ու նորարարությունների կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ:

Առաջիկայում նպատակ ունենք աստիճանական քայլերի արդյունքում հասնել մի իրավիճակի, որ յուրաքանչյուր ուսուցիչ էլ ավելի հմտորեն կարողանա տիրապետել համակարգչային ծրագրերին և անկաշկանդ կերպով օգտվել կարողանա համացանցի ընձեռած լայն հնարավորություններից: Այդ նպատակով անհրաժեշտ ենք համարում կազմակերպել համապատասխան դասընթացներ:

Միաժամանակ՝ անհրաժեշտ ենք համարում կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, aniedu.am, emis.am և այլն):

Նախատեսում ենք աջակցել մանկավարժներին, մշակել և տպագրել իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ՝ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար, **որոնք ինքնին կնպաստեն մանկավարժական կադրերի ինքնակրթության հնարավորությունների ընդլայնմանը**:

2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար: Այդ են վկայում առարկաների մեծ մասի

տարեկան միջին և քննական գնահատականները, ԲՈՒՀ-եր ընդունվող սովորողների թիվը:

Շրջանավարտների թվի համեմատ ԲՈՒՀ ընդունվողների վիճակագրությունը՝ ընթացիկ ժամանակահատվածին նախորդող 3 ուսումնական տարիների համար, ունի հետևյալ պատկերը.

2019-2020 ուսումնական տարում դպրոցի թվով 4 շրջանավարտներից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողներ չեն եղել,

2020-2021 ուսումնական տարում դպրոցի թվով 7 շրջանավարտներից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվել են 3-ը,

2021-2022 ուսումնական տարում դպրոցի թվով 9 շրջանավարտներից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվել են 3-ը:

<u>Գծապատկեր 3</u>



Սովորողները 3 առարկաների գծով ստացել են հետևյալ միջին քննական գնահատականները՝

Հայոց լեզու և գրականություն – 16 միավոր,

Հայոց պատմություն – 16 միավոր,

Մաթեմատիկա – 17 միավոր:

Սովորողների քննական միջին գնահատականները ցուցադրված են ստորև ներկայացվող ***Գծապատկեր 4*** – ում:

Գծապատկեր 4



Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- **Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան,**
- **Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը,**

- **Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ,**
- **Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը,**
- **Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր,**

- **Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը,**
- **Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում են ծագած խնդիրները, գտնվում են լուծման ուղիները,**
- **Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը,**
- **Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:**

Դպրոցում կրթության որակն էլ ավելի կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները:

Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը,
2. Կրթական գործընթացի կատարողականը,
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը,
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում,
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Վերլուծելով հաստատության կողմից տրամադրվող կրթության որակի համապատասխանությունը չափորոշչային պահանջներին՝ կարող ենք ասել, որ տրամադրվող կրթության որակը համապատասխանում է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման թիվ 2 հավելվածով հաստատված հանրակրթության պետական չափորոշչին. դպրոցն ավարտած շրջանավարտները տիրապետում են **լեզվական գրագիտությանը, ունեն սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, տնտեսական, մաթեմատիկական և գիտատեխնիկական** կարողություններ:

2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել և ապահովել նոր ստացած գիտելիքների ու հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների, ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր՝ զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այս հիմնախնդիրները **լուծելու նպատակով** հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Հաստատությունում առկա են ոլորտային հետևյալ հիմնախնդիրները, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող ***Աղյուսակ 1-ում***:

Աղյուսակ 1

Հաստատությունում առկա ոլորտային հիմնախնդիրները

հհ	Ոլորտը	Հիմնախնդիրը
1	Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր՝ ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով

2	Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Արտաբյուջետային միջոցների ստեղծում
3	Կառավարման և խորհրդակցական մարմիններ	.Շրջանավարտների խորհրդի ստեղծում .Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում
4	Մանկավարժական համակազմ	.Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով .Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում
5	Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում
6	Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	.Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում .Համագործակցությունների շրջանակի ընդլայնում .Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում
7	Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում
8	Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	.Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում .Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում .Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում

9	Տեխնոլոգիաներ և նորարարություն	.Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, .Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում, .Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում .Մենթորական համակարգի ներդնում
10	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	.Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս՝ ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում .ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում՝ որպես ներքին իրավական ակտերի

2.10 Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (ամփոփ վերլուծություն)

Հաստատության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների ամփոփ վերլուծությունը ներկայացվում է ***Աղյուսակ 2-ում***:

Աղյուսակ 2

Հաստատության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1.Դպրոցի շենքային պայմանները	
.Հիմնանորոգված դպրոցի շենք .Տարածքի ընդարձակությունը, դասասենյակների մեծությունը և լուսավորվածությունը	.Մարզադահլիճի և մարզահրապարակի վերանորոգումը, .Նոր գույքի և նյութերի ձեռք բերումը .համակարգչային լսարանի, գրադարանի և ընթերցասրահի, միջանքներում հանգստյան գոտիների,

	հանդիսությունների դահլիճի կահավորվածությունը
2.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր (դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը)	
.Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն .Լիազոր մարմնի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան .Դպրոցում վարվում են դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու , ՈՒԹՀՎ վերլուծություն կատարելու նպատակով	.Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն .ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում՝ որպես ներքին իրավական ակտերի
3. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը	
<u>Վարչական կազմ</u> .Ղեկավարման բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմը .Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացումը, .Կառավարման ժողովրդավարական ոճը, .Կադրային ճիշտ քաղաքականությունը, .Բոլոր օղակների աշխատանքի համակարգվածությունը և վերահսկողությունը,	

.Մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմը .Նպատակաուղղված և արդյունավետ ներդպրոցական վերահսկողությունը՝ միտված կրթության որակի ապահովմանը .Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը ***<u>Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ</u>*** .Անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետները .Բարձր պատասխանատվությունը, .Աշակերտակենտրոն մոտեցումները .Սովորողի հաջողության կարևորումը և գնահատումը	.Տարբեր գիտաժողովներին մասնակցության բացակայություն .Հանրապետական մրցույթներին մասնակցության ցածր տոկոս .Հանրապետական և միջազգային սեմինարների, վեբինարների ցածր մասնակցություն

. Մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը .Մեթոդական սեմինարներ՝միտված ուսուցման որակի բարձրացմանը .Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները .Քաղաքացիական դաստիարակությունը. արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում .Արտադասարանական և համադպրոցական միջոցառումները .Փորձառու և կոմպետենտ լաբորանտները .Սպասարկող պատասխանատու անձնակազմը	
4.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության վերլուծություն	

.Միջինից բարձր առաջադիմությունը .Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին .Մասնակցությունը «Կենգուրու» և «Մեղու» մրցույթներին .Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշը .Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին .ԲՈՒՀ-եր ընդունվելու լավ ցուցանիշը	Մարզային, հանրապետական, առարկայական օլիմպիադաներում հաղթանակների ցածր ցուցանիշը
5. Համայնքի հետ համագործակցության, կրթության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն	
.Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին .Ծնողական խորհրդի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցական աշխատանքներում .Աշակերտական խորհրդի ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում .Հաստատության գործունեության թափանցիկություն .Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների	.Համագործակցության, նախաձեռնությունների պասիվություն .Ծնողական խորհրդի պասիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում .Ծնողական խորհրդի պասիվ համագործակցությունը համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ .Ծնողների կողմից դասալսումներ չիրականացնելը • Ծնողական պասիվ մասնակցություն շաբաթօրյակներին, ծառատունկներին .<<Դասը վարում է ծնողը>> մասնագիտական փորձի փոխանակման պակաս .ԾԽ պասիվ մասնակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրման գործընթացին

.Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործունեություն	.Շրջանավարտների և հոգեբարձուների խորհուրդների բացակայություն
6.Ռեսուրսներով ապահովվածությունը	
.Հմուտ և որակյալ կադրեր	.Նոր սերնդի Էլեկտրոնային գրատախտակներ և պրոյեկտորներ .Նոր գույք .Հանդիսությունների դահլիճի կահավորում .Համակարգչային սենյակի կահավորում .Գրադարանի և ընթերցասրահի կահավորում .Մեթոդ կաբինետի վերաբացում .Առարկայական նոր ուսումնական նյութեր Ֆիզիկայի քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների՝ ժամանակակից սարքավորումներով և ուսումնական նյութերով հագեցվածություն .Համակարգչային տեխնիկայի համալրում
7. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները	

.Հեռավար կրթական հարթակի կիրառում .Հեռավար դասերի վարում .Նախագծային աշխատանքների կազմակերպում	.Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում դասապրոցեսում .Ուսուցանող գնահատման ներդնում .Դրամաշնորհային ծրագրեր
8. Հաղորդակցություն և համագործակցություն	
Համագործակցություն մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի սոցիալիզացիային նպաստելու, քաղաքացիական գիտակցություն ձևավորելու նպատակով	ԲՈՒՀ-երի և այլ կրթօջախների հետ համագործակցության ընդլայնում
9. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն	
.Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները .Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործումը .Աշխատավարձի և կոմունալ ծախսերի ժամանակին վճարումը	.Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալը .Աշակերտների թվի նվազման հետևանքները .Արտաբյուջետային միջոցների բացակայությունը .Լրացուցիչ կրթական ծառայությունների ներդրման բացակայությունը

	.Ծնողների, համայնքի, բարերարների կողմից ներդրվող միջոցների բացակայությունը
Հնարավորություններ	***Վտանգներ***
.Նոր նախաձեռնությունների և դրանց իրագործման համար հնարավորությունների ստեղծումը .Լրացուցիչ կրթական ծրագրերի իրագործումը .Միջազգային համագործակցության ընդլայնումը .Նյութատեխնիկական բազայի համալրումը .Սովորողների առաջընթացի և բարձր առաջադիմության ապահովումը .Որակավորման տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման մասնակցող, ստեղծագործ ուսուցիչների թվի ավելացումը	.Մարզադահլիճի և մարզահրապարակի վերանորոգման և հիմնանորոգման խնդրի լուծման հետ կապված դժվարությունները չհաղթահարելը .Տնտեսումների, սովորողների թվի աճի ապահովման, աջակցությունների հայթայթման միջոցով բյուջեի աճը չապահովելը

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հաստատության զարգացման համար մեր առաջ նպատակ ենք դնում լուծելու հետևյալ ոլորտային խնդիրները, որոնք արտացոլված են ստորև ներկայացված ***Աղյուսակ 3-ում***.

Աղյուսակ 3

Հաստատության նպատակները և խնդիրները

հհ	Ոլորտը	Նպատակը	Խնդիրը
1	Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստել կրթության որակի բարելավմանը	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով
2	Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Ֆինանսական միջոցների աճ	Աշակերտների թվի ավելացման միջոցով դպրոցի բյուջեի աճ, արտաբյուջետային միջոցների ձևավորում
3	Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Դպրոց-համայնք (հանրային միջավայր) կապի ամրապնդման խթանում	Խորհրդակցական մարմինների գործունեության ընդլայնում, համայնքի և հանրային միջավայրի հետ ակտիվ փոխհամագործակցության ապահովում
4	Մանկավարժական համակազմ	Համակազմի շարունակական համալրում փորձառու և որակյալ կադրերով	Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում

5	Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում	.Սովորողների մոտիվացիայի խթանում .Ուսումնառության որակի բարելավում .Աշակերտական ինքնավարության խթանում .Արժեհամակարգի ձևավորում .Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցությունների շրջանակների լայնացում
6	Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում	.Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում .Համագործակցությունների շրջանակի ընդլայնում .Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում
7	Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում
8	Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ	.Վերջնարդյունքների գնահատում՝ մնացորդային գիտելիքի ստուգում .Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում .Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում

9	Տեխնոլոգիաներ և նորարարություն	Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում
10	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին	.Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը .Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը՝ որպես ներքին իրավական ակտերի

4.ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

<u>Աղյուսակ 2-ում</u> նկարագրված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները ավելի տեսանելի և մատչելի կերպով ներկայացնելու նպատակով՝ ներկայացվում է հետևյալ աղյուսակավորված տեղեկատվությունը.

Թիվ 1 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Բարելավել դպրոցի շենքային պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստել կրթության որակի բարելավմանը
Խնդիր. Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով

Սահմանված թիվ 1 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Մարզահրապարակի և մարզադահլիճի վերանորոգում, հանդերձարանների վերանորոգում և կահավորում	Տնօրեն, Ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ՆԶՊ ուսուցիչ, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	1.Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցներ, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ , 2.Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, համապատասխան տեխնիկա, նյութերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ ըստ նախագիծ-նախահաշվի, հանդերձարանների կահավորման համար անհրաժեշտ գույք՝ ըստ նախապես մշակված գույքացուցակի
Առարկայական կաբինետների (գրականություն, աշխարհագրություն, պատմություն,ֆիզիկա,	Տնօրեն, Առարկան դասավանդող ուսուցիչներ, Մեթոդմիավորումների նախագահներ,	2023-2025	1.Հովանավորչական միջոցներ, 2.Առարկայական կաբինետների համար անհրաժեշտ գույք՝ ըստ

քիմիա) ստեղծում և ձևավորում	Վարչատնտեսական մասի համակարգող		նախապես մշակված գույքացուցակի
Լաբորատոր գույքի և նյութերի ձեռք բերում (թարմացում)	Տնօրեն, Լաբորանտներ, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	1.Դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Դպրոցական լաբորատոր գույք՝ ըստ նախապես մշակված գույքացուցակի, լաբորատոր փորձերի համար անհրաժեշտ նյութեր՝ ըստ նախապես մշակված ցանկի
Դասասենյակների համալրում նոր գույքով	Տնօրեն, Վարչատնտեսական մասի համակարգող	2024-2026	1.Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցներ, 2. Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 3.Թվով 100 հատ աշակերտական սեղաններ և նստարաններ
Համակարգչային լսարանի կահավորում	Տնօրեն, Համակարգչային օպերատոր, Վարչատնտեսական մասի համակարգող	2024-2026	1.Հովանավորչական միջոցներ, 2. Թվով 8 հատ համակարգչային սեղաններ և աթոռներ
Համակարգչային տեխնիկայի համալրում, էլեկտրոնային գրատախտակների ձեռք բերում	Տնօրեն, Համակարգչային օպերատոր, Վարչատնտեսական մասի համակարգող	2025-2027	1.Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Թվով 8 հատ նոր սերնդի համակարգիչներ, Թվով 2 հատ էլեկտրոնային գրատախտակ
Դպրոցի հանդիսությունների դահլիճի կահավորում	Տնօրեն, ԿԱԴԱՀ (Կրթական աջակցությունների և դասիարակչական աշխատանքների համակարգող),	2024-2025	1.Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներ, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ,

	Դասղեկներ, Վարչատնտեսական մասի համակարգող		2.Թվով 70 հատ դահլիճային աթոռներ, Բեմական վարագույր՝ 1 հատ, ամբիոն՝ 1 հատ
Աշակերտական խորհրդի սենյակի կահավորում	Տնօրեն, Ծնողական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ Վարչատնտեսական մասի համակարգող	2024-2025	1.Դպրոցի միջոցներ (սեղան, աթոռ, գրապահարան և այլն), ծնողական ներդրումներ
Ժամանակակից գրադարանի (նաև առցանց) և ընթերցասրահի կահավորում	Տնօրեն, Գրադարանավար, Համակարգչային օպերատոր, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	1.Արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Թվով 2 հատ նոր սերնդի համակարգիչ, Թվով 1 հատ էլեկտրոնային գրատախտակ, ինտերնետ կապ, ընթերցանության համար 6 հատ համապատասխան սեղան, 12 հատ աթոռ,
Գրադարանում անգլերեն լեզու սովորող երեխաների համար առանձին բաժնի ստեղծում՝ հագեցած անգլերեն լեզվով գեղարվեստական գրականությամբ, դասագրքերով, ուսումնաօժանդակ ձեռնարկներով	Տնօրեն, Գրադարանավար, Անգլերեն լեզվի ուսուցիչ, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	1.Կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից կատարվող դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2. Անգլերեն լեզվով գեղարվեստական գրականություն, դասագրքեր, ուսումնաօժանդակ ձեռնարկներ
Գրադարանին և ընթերցասրահին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված	Տնօրեն,		1.Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ,

համակարգիչներից դասերից հետո կօգտվեն այն սովորողներն ու ուսուցիչները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն	Համակարգչային օպերատոր, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	2.Թվով 2 հատ նոր սերնդի համակարգիչ, ինտերնետ կապ, թվով 2 հատ համակարգչային սեղան և աթոռ
Դպրոցի 120-ամյակին ընդառաջ ստեղծել դպրոցի պատմության թանգարան	Տնօրեն, Ուսուցիչներ, Ծնողներ, Աշակերտներ, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2025	1.Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Առանձնացված տարածք, Թանգարանային նյութեր, Թանգարանային նյութերի կահավորման համար անհրաժեշտ համապատասխան գույք (գրապահարաններ, գրապահոցներ, ցուցատախտակներ, ցուցափեղկեր և այլն)
Հանգստի գոտիների ստեղծում միջանցքներում	Տնօրեն, Դասղեկներ, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2027	1.Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Առանձնացված և հարմարեցված թվով 8 տարածքներ, 24 հատ աթոռ և 8 հատ հարմարեցված սեղան

Թիվ 2 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Ֆինանսական միջոցների աճ
Խնդիր. Աշակերտների թվի ավելացման միջոցով դպրոցի բյուջեի աճ, արտաբյուջետային միջոցների ձևավորում

Սահմանված թիվ 2 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Դպրոցի գործունեության, ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում, համագործակցություն հանրակրթական դպրոցների հետ՝ խթանելու ընդունելությունը	Տնօրինություն, Մանկավարժական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Դասղեկներ, Համակարգչային օպերատոր	2023-2028	Ֆինանսական միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում	Տնօրինություն, Մասնագետ-մանկավարժներ, ԿԱԴԱՀ,Դասղեկներ	2024-2025	1.Ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից տրամադրվող նվիրատվական միջոցներ, 2.Համապատասխան գրականություն և օժանդակ նյութեր
Սոցիալ-մշակութային կենտրոնի հիմնում դպրոցի նախկին արհեստանոցի տարածքում	Տնօրեն, Վարչատնտեսական մասի համակարգող, Մասնագետ-մանկավարժներ, ԿԱԴԱՀ, Դասղեկներ, Ծնողներ, Աշակերտներ	2024-2026	1.Դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Դպրոցի միջոցներ (սեղան, աթոռ, գրապահարան և այլն), ծնողական ներդրումներ, 3.Ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից տրամադրվող նվիրատվական միջոցներ,

			3.Արհեստանոցի տարածքի վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, նյութերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ ըստ նախագիծ-նախահաշվի, 4.Համապատասխան գրականություն և օժանդակ նյութեր
Տնտեսումներ	Տնօրեն, Վարչատնտեսական մասի համակարգող	2023-2028	x
Համայնքում գործող իրավաբանական անձից (ձեռնարկություն և այլն) երաշխավորված դրամական հատկացումների ձեռքբերում	Տնօրինություն, կառավարման և խորհրդակցական մարմիններ	2023-2028	x

Թիվ 3 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Դպրոց-համայնք (հանրային միջավայր) կապի ամրապնդման խթանում
Խնդիր. Խորհրդակցական մարմինների գործունեության ընդլայնում, համայնքի և հանրային միջավայրի հետ ակտիվ փոխհամագործակցության ապահովում

Սահմանված թիվ 3 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել	Տնօրինություն, ԿԱԴԱՀ, դասղեկներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը			
Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը	Կառավարման խորհուրդ, Տնօրեն	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Ստեղծել շրջանավարտների խորհուրդ	Կառավարման խորհուրդ, Տնօրեն, ՄԽ, ԱԽ, ԾԽ	2024-2025	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Թիվ 4 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Մանկավարժական համակազմի շարունակական համալրում փորձառու և որակյալ կադրերով
Խնդիր. Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում

Սահմանված թիվ 4 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Վերապատրաստումներ, ատեստացիաներ	Տնօրինություն, մանկավարժական համակազմ, ԿՀՆԱԿ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում	Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին	Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Ներդպրոցական վերահսկողութուն	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Թիվ 5 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում

Խնդիր.

.Սովորողների մոտիվացիայի խթանում

.Ուսումնառության որակի բարելավում

.Աշակերտական ինքնավարության խթանում

.Արժեհամակարգի ձևավորում

.Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցությունների շրջանակների լայնացում

Սահմանված թիվ 5 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում (տես նպատակ 1)	Տնօրինություն (տես նպատակ 1)	2023-2028	Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներ, Արտաբյուջետային միջոցներ, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, (տես նպատակ 1)

Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում	Տնօրեն, մեթոդմիավորման նախագահներ, մանկավարժներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Աշակերտական խորհրդի սենյակի ձևավորում (տես նպատակ 1), աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին	Տնօրեն, Ծնողական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ Վարչատնտեսական մասի համակարգող (տես նպատակ 1)	2024-2025	Դպրոցի միջոցներ (սեղան, աթոռ, գրապահարան և այլն), ծնողական ներդրումներ (տես նպատակ 1)
Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ՝ .նախասիրությունների բացահայտմանն ուղղված թեստեր, .մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ախտորոշող թեստեր, .մասնագիտությունների վերաբերյալ ֆիլմերի դիտում, ճանաչողական այցեր, հանդիպումներ, .աշխատաշուկայի ներկայացում, վերլուծություն	Տնօրեն, ԿԱԴԱՀ, մանկավարժական համակազմ, Դասղեկներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
«Իմ ընտրած մասնագիտությունը» թեմայով քննարկում՝ շրջանավարտների ներկայացմամբ	Տնօրեն, ԿԱԴԱՀ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Թիվ 6 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում
Խնդիր.

.Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում

.Համագործակցությունների շրջանակի ընդլայնում

.Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում

Սահմանված թիվ 6 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ. .Աղբի տեսակավորում, թափոնների հանձնում, .Շաբաթօրյակ, ծառատունկ, .Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ, .Համայնքի ներկայացուցիչների և ծնողների մասնակցությամբ բարեգործական ցուցահանդեսների, միջոցառումների կազմակերպում՝ հասույթը վիրավոր զինվորներին,	Կառավարման խորհուրդ, Տնօրինություն, ԿԱԴԱՀ, ՄԽ, ԱԽ, ԾԽ	2024-2025	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկա կան պարագաներ չի պահանջվում

զոհվածների ընտանիքներին, ծերերին ուղղելու նպատակով			
Սոցիալ-մշակութային դպրոցի հիմնում՝ .Ստեղծել սպորտային, մշակութային ակումբներ, .Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ, .Կազմակերպել նկարչական մրցույթներ և բարեգործական ցուցահանդեսներ, համայնքի և ծնողների ներգրավմամբ և հասույթն ուղղել բարեգործական նպատակների, .Կազմակերպել համերգներ դպրոցում շնորհալի աշակերտների միջոցով, մշակութային ծրագրերով հանդես գալ զորամասերում (տես նպատակ 2)	Կառավարման խորհուրդ, Տնօրինություն, ԿԱԴԱՀ, ՄԽ, ԱԽ, ԾԽ (տես նպատակ 2)	2024-2025	1.Դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2.Դպրոցի միջոցներ (սեղան, աթոռ, գրապահարան և այլն), ծնողական ներդրումներ, 3.Ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից տրամադրվող նվիրատվական միջոցներ, 3.Արհեստանոցի տարածքի վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, նյութերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ ըստ նախագիծ-նախահաշվի, 4.Համապատասխան գրականություն և օժանդակ նյութեր (տես նպատակ 2)

Թիվ 7 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ և խնդիր

Նպատակ. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը

Խնդիր. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում

Սահմանված թիվ 7 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում	Կառավարման խորհուրդ, Տնօրինություն, ՆԶՊ ուսուցիչ, դասղեկներ, հոգեբան	2023-2028	1.Դպրոցի բյուջեի միջոցներ, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցված աշակերտական գույք և այլ պարագաներ
Լաբորատորիաների, առարկայական կաբինետների, հանգստի և ժամանցի պայմանների շարունակական համալրում, արդիականացում (տես նպատակ 1)	Տնօրեն (տես նպատակ 1)	2023-2028	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ (տես նպատակ 1)
Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդնում դասապրոցեսում	Կառավարման խորհուրդ, Տնօրինություն, Մանկավարժական համակազմ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Թիվ 8 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ

Խնդիր.

.Վերջնարդյունքների գնահատում՝ մնացորդային գիտելիքի ստուգում

.Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում

.Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում

Սահմանված թիվ 8 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
.Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում .Մնացորդային գիտելիքի ստուգում .Հայտորոշիչ աշխատանքներ .Հարցազրույցներ՝ կրթական կարիքի գնահատման համար	Տնօրինություն, Մեթոդմիավորման նախագահներ, Մանկավարժական համակազմ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
.Անհատական աշխատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ .Աշխատանքային միջավայրի տրամադրում (ընթերցասրահ, համակարգչային լսարան, գրադարան)	Տնօրինություն, Մեթոդմիավորման նախագահներ, Մասնագետ-մանկավարժներ, ԿԱԴԱՀ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

.Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների անցկացում			
Օտար լեզուների խորացված ուսումնասիրում, սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացում	Տնօրինություն, Մանկավարժ-մասնագետներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Գրադարանում անգլերեն լեզվով բաժնի ստեղծում (տես նպատակ 1)	Տնօրինություն, գրադարանավար (տես նպատակ 1)	2023-2025	Կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից կատարվող դրամաշնորհային ծրագրերի միջոցներ (տես նպատակ 1)

Թիվ 9 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

Խնդիր. Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում

Սահմանված թիվ 9 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Մեթոդ-կաբինետի վերաբացում, ռեսուրսների համալրում,	Կառավարման խորհուրդ, Տնօրինություն,	2023-2028	1.Դպրոցի միջոցներ (սեղան, աթոռ,

ժամանակակից գրականության ձեռքբերում	մեթոդմիավորման նախագահներ		գրապահարան և այլն), 2.Կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից կատարվող դրամաշնորհային ծրագրերի միջոցներ, 3.Մեթոդական ժամանակակից գրականություն, օժանդակ նյութեր
Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում (ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ)	Տնօրինություն, Մեթոդմիավորման նախագահներ, Մանկավարժներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Մենթորական համակարգի ներդնում	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ, Մանկավարժական համակազմ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում (տես նպատակ 1)	Տնօրեն (տես նպատակ 1)	2025-2027	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ (տես նպատակ 1)
Լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում (տես նպատակ 1)	Տնօրեն (տես նպատակ 1)	2023-2025	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի միջոցներ (տես նպատակ 1)

Մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ	Տնօրինություն, մանկավարժական համակազմ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

Թիվ 10 նպատակի և խնդրի իրականացումն ապահովող գործողությունները, միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Նպատակ. Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին

Խնդիր.

.Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը

.Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը

Սահմանված թիվ 10 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Պատասխանատուները**	**Ժամանակացույցը (տարեթվերով)**	**Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
Իրավական ակտերի լուսաբանում	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում
ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում	Տնօրինություն, մեթոդմիավորման նախագահներ	2023-2028	Ֆինանսական միջոցներ և այլ նյութատեխնիկական պարագաներ չի պահանջվում

5.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



6.ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է:

Որպես գնահատման գործիքներ ծառայում են **յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով չափվում են ակնկալիքների կատարողականները**, այլ կերպ ասած, **դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների** (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ) **գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը:**

Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի **վիճակագրական տվյալները** և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է **ներքին և արտաքին գնահատական**:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը պետք է մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն անհրաժեշտ է իրականացնել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման համատեքստում:

<u>Հաստատությունում կրթության որակի և առաջադիմության ցուցանիշների մասին հստակ պատկերացումներ ունենալու նպատակով սահմանում ենք կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման հետևյալ չափանիշները.</u>

1.Սովորողների առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան (նախորդ երկու կիսամյակների ցուցանիշների տոկոսային համեմատականը),

2.Սովորողների՝ տվյալ առարկայի ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքները,

3.Տրված գրավոր աշխատանքների արդյունքները (գնահատումն իրականացվում է ըստ «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թվի),

4.Դասավանդվող առարկայի որակի ցուցանիշը (տրված գրավոր աշխատանքից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների և նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած դասարանների սովորողների միջին տոկոսային թվերի համեմատականը),

5.Աշակերտների հաջողությունները առարկայական օլիմպիադաներից (մարզային, հանրապետական, միջազգային):

<u>Հաստատությունում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման նպատակով սահմանում ենք հետևյալ չափանիշները.</u>

1. Խորհրդակցական մարմինների, համայնքի և շահառու այլ կազմակերպությունների հետ սերտ համագործակցության միջոցով **բազմակարծիք և մասնակցային լայն միջավայրի ապահովումը**,

2. Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված **ներառական միջավայրի ապահովումը**,

3. Արժեքային միջավայրի ապահովումը, որտեղ ձևավորված են հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին:

<u>Հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման նպատակով սահմանում ենք հետևյալ չափանիշները.</u>

1. Անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված մանկավարժ-մասնագետների արժևորում և խրախուսում՝ խրախուսման գործիքակազմերի հստակեցում և կիրառում,

2. Բարձր պատասխանատվություն և նվիրվածություն դրսևորող աշխատակիցների խրախուսում՝ խրախուսման նոր մեթոդների մշակում և ներդրում,

3.Աշակերտակենտրոն մոտեցումներ դրսևորող, սովորողների հաջողությունը կարևորող և գնահատող մանկավարժ-մասնագետների արժևորում և խրախուսում՝ խրախուսման մեթոդների հստակեցում և կիրառում,

4.Ինքնակրթության զարգացման նպատակով՝

4.1 Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրություն և կիրառում պրակտիկ աշխատանքում,

4.2 Մանկավարժության նորագույն նվաճումները ուսուցչին հասանելի դարձնելու գործիքակազմերի և մեխանիզմների մշակում, սեմինարների կազմակերպում, մանկավարժական մեթոդական ընթերցումների ապահովում,

5. Մանկավարժական կադրերի ինքնակրթության հնարավորությունների ընդլայնմանը նպաստելու նպատակով՝ մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերի մշակում և տպագրում, փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար համապատասխան պայմանների ստեղծում:

Որպես դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության գնահատման չափանիշներ, անհրաժեշտ ենք համարում սահմանել հետևյալ չափանիշները.

1.Դպրոցի և համայնքի ներկայացուցիչների միջև կայացած հանդիպումների պարբերականությունը, հանդիպումների ժամանակ քննարկված հարցերին հետևողականորեն լուծում տալու պատրաստակամությունն ու փաստացի կատարված աշխատանքները,

2.Դպրոց-ծնողական համայնք կապի անընդհատությունն ու փաստացի կատարված աշխատանքների արդյունավետությունը,

3.Դպրոցի և գործընկեր կառույցների (կազմակերպությունների) միջև կայացած հանդիպումների պարբերականությունն ու առնչվող հարցերի լուծումները գտնելու գործընթացի արդյունավետությունը:

Կրթության որակի վրա իրենց ուղղակի ազդեցությունն ունեն նաև արտադպրոցական և երկարօրյա ուսուցումները, ուստի վերջիններիս գնահատման համար սահմանում ենք հետևյալ չափանիշները.

<u>Արտադպրոցական ուսուցման գնահատման չափանիշներն են.</u>

1.Հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելը,

2. Հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացումն ապահովելը,

3.Ռազմահայրենասիրական դաստիարակության աստիճանը,

4.Բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերումը:

<u>Երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներն են.</u>

1.Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում սովորողի ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելը,

2.Սովորողների դասապատրաստումներին պատշաճ կարգով աջակցելը,

3.Սովորողի ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելը,

4.Սովորողի ստեղծագործական ունակությունները զարգացնելը,

5.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ, լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը:

<u>Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման նպատակով սահմանում ենք հետևյալ չափանիշները.</u>

1. Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում,

2. Յուրաքանչյուր երեխայի համար հավասար հնարավորությունների ստեղծում,

3.Կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի համապատասխանեցում ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքներին,

3. Երեխայի կրթական ծրագրերի մատչելիության ապահովում,

4. Ուսուցիչների վերապատրաստման ապահովում:

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թիվ 1 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Բարելավել դպրոցի շենքային պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստել կրթության որակի բարելավմանը
Խնդիր. Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր, ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով

Սահմանված թիվ 1 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	Ռիսկերը	Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները
Մարզահրապարակի և մարզադահլիճի վերանորոգում, հանդերձարանների վերանորոգում և կահավորում	Պետական բյուջեից տրամադրվող ոչ բավարար ֆինանսական միջոցները, Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հետևողական միջոցների ձեռնարկում հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ
Առարկայական կաբինետների (գրականություն, աշխարհագրություն, պատմություն,ֆիզիկա, քիմիա) ստեղծում և ձևավորում	Հովանավորչական միջոցների բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային և դրամաշնորհային ծրագրերի ծրագրերի իրականացման ուղղությամբ
Լաբորատոր գույքի և նյութերի ձեռք բերում (թարմացում)	Համապատասխան գույքի և նյութերի ձեռք բերման սահմանափակ հնարավորությունները, դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ

Դասասենյակների համալրում նոր գույքով	Պետական բյուջեից տրամադրվող ոչ բավարար ֆինանսական միջոցները, Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հետևողական միջոցների ձեռնարկում հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ
Համակարգչային լսարանի կահավորում	Հովանավորչական միջոցների բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ
Համակարգչային տեխնիկայի համալրում, էլեկտրոնային գրատախտակների ձեռք բերում	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ
Դպրոցի հանդիսությունների դահլիճի կահավորում	Պետական բյուջեից տրամադրվող ոչ բավարար ֆինանսական միջոցները, Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հետևողական միջոցների ձեռնարկում հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ուղղությամբ
Աշակերտական խորհրդի սենյակի կահավորում	Ռիսկեր չկան	Խնդրի լուծումը տեսնում ենք դպրոցի և ծնողական համայնքի առողջ համագործակցության համատեքստում
Ժամանակակից գրադարանի (նաև առցանց) և ընթերցասրահի կահավորում	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ
Գրադարանում անգլերեն լեզու սովորող երեխաների համար առանձին բաժնի ստեղծում՝ հագեցած անգլերեն լեզվով գեղարվեստական գրականությամբ, դասագրքերով, ուսումնաօժանդակ ձեռնարկներով	Դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում

Գրադարանին և ընթերցասրահին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված համակարգիչներից դասերից հետո կօգտվեն այն սովորողներն ու ուսուցիչները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն:	Ֆինանսական ոչ բավարար միջոցները, Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ
Դպրոցի 120-ամյակին ընդառաջ ստեղծել դպրոցի պատմության թանգարան	Հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում
Հանգստի գոտիների ստեղծում միջանցքներում	Ֆինանսական միջոցների սղությունը, հովանավորչական միջոցներ չձևավորելը, դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ

Թիվ 2 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Ֆինանսական միջոցների աճ
Խնդիր. Աշակերտների թվի ավելացման միջոցով դպրոցի բյուջեի աճ, արտաբյուջետային միջոցների ձևավորում

Սահմանված թիվ 2 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Ռիսկերը**	**Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները**
Դպրոցի գործունեության, ակտիվ և հագեցած առօրյայի լուսաբանում, համագործակցություն հանրակրթական դպրոցների հետ՝ խթանելու աշակերտների ընդունելությունը	Գործընկեր հանրակրթական դպրոցներում նմանատիպ խնդրի առկայություն	Գործընկեր հանրակրթական դպրոցների հետ համագործակցության ընդլայնում

Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում	Համապատասխան նյութերի ձեռք բերման սահմանափակ հնարավորությունները, Ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների կողմից տրամադրվող նվիրատվական միջոցների բացակայությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում
Սոցիալ-մշակութային կենտրոնի հիմնում դպրոցի նախկին արհեստանոցի տարածքում	Ֆինանսական միջոցների սղությունը, Համապատասխան մասնագետների բացակայությունը, Դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Հետևողական միջոցների ձեռնարկում հովանավորչական ծրագրերի իրականացման ուղղությամբ, Հետևողական միջոցների ձեռնարկում համապատասխան մասնագետների ներգրավման ուղղությամբ
Տնտեսումներ	Ոչ բավարար չափով խնայողությունները	Ռացիոնալ և տնտեսող ֆինանսատնտեսական գործունեության իրականացում
Համայնքում գործող իրավաբանական անձից (ձեռնարկություն և այլն) երաշխավորված դրամական հատկացումների ձեռքբերում	Համագործակցելու պատրաստակամության բացակայությունը	Դպրոց-Գործարար միջավայր կապի ամրապնդման ուղղությամբ հետևողական միջոցների ձեռնարկում

Թիվ 3 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Դպրոց-համայնք (հանրային միջավայր) կապի ամրապնդման խթանում
Խնդիր. Խորհրդակցական մարմինների գործունեության ընդլայնում, համայնքի և հանրային միջավայրի հետ ակտիվ փոխհամագործակցության ապահովում

Սահմանված թիվ 3 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	Ռիսկերը	Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները
Շարունակել սերտ համագործակցությունը կառավարման և	Ծնողական խորհրդի պասիվությունը, խորհրդակցական	Խորհրդակցական մարմինների միջև առողջ համագործակցության

խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը	մարմինների միջև ոչ բավարար համագործակցության աստիճանը	ապահովման նպատակով խթանող և շահագրգռող միջոցների ձեռնարկում
Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը	Ռիսկեր չկան	Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա
Ստեղծել շրջանավարտների խորհուրդ	Ռիսկեր չկան	Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա

Թիվ 4 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Մանկավարժական համակազմի շարունակական համալրում փորձառու և որակյալ կադրերով
Խնդիր. Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում

Սահմանված թիվ 4 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Ռիսկերը**	**Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները**
Վերապատրաստումներ, ատեստացիաներ	Ատեստավորման արդյունքները (ատեստավորման փուլը չհաղթահարելը)	Ձեռնարկել միջոցներ ատեստավորմանը պատշաճ կարգով նախապատրաստվելու ուղղությամբ
Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում, դասավանդման որակների արդիականացում	Ոչ ճիշտ մեթոդների ընտրությունը, թերի պլանավորումները	Շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների կողմից մեթոդական աջակցության տրամադրում
Ուսուցիչների առաջավոր փորձի տարածում, մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին	Ոչ ճիշտ մեթոդների ընտրությունը	Շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների կողմից մեթոդական աջակցության տրամադրում
Ներդպրոցական վերահսկողութուն	ՆԴՎ պլանի մասին քիչ տեղեկացված լինելը	Պատշաճ իրազեկման իրականացում

Թիվ 5 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում

Խնդիր.

.Սովորողների մոտիվացիայի խթանում

.Ուսումնառության որակի բարելավում

.Աշակերտական ինքնավարության խթանում

.Արժեհամակարգի ձևավորում

.Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ, համագործակցությունների շրջանակների լայնացում

Սահմանված թիվ 5 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	Ռիսկերը	Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները
Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում (տես նպատակ 1)	Ֆինանսական ոչ բավարար միջոցները (տես նպատակ 1-ի ռիսկերը)	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացում (տես նպատակ 1-ի ռիսկը մեղմող գործողությունները)
Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում	Գնահատման մեթոդաբանության թերի իմացությունը և նրա կիրառման թույլ կարողությունը	Մեթոդաբանության հստակեցում, կիրառման կարողությունների զարգացում
Աշակերտական խորհրդի սենյակի ձևավորում (տես նպատակ 1), աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին	Ռիսկեր չկան	Խնդրի լուծումը տեսնում ենք դպրոցի և ծնողական համայնքի առողջ համագործակցության համատեքստում

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ	Նախասիրությունների բացահայտման, մասնագիտությունների և մարդու բնույթի համապատասխանությունը ախտորոշող թեստերի ճիշտ ընտրությունը	Շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների կողմից մեթոդական աջակցության տրամադրում
«Իմ ընտրած մասնագիտությունը» թեմայով քննարկում՝ շրջանավարտների ներկայացմամբ	Ռիսկեր չկան	Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա

Թիվ 6 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում

Խնդիր.

.Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում

.Համագործակցությունների շրջանակի ընդլայնում

.Սոցիալ-մշակութային դպրոցի կայացում

Սահմանված թիվ 6 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Ռիսկերը**	**Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները**
Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ. .Աղբի տեսակավորում, թափոնների հանձնում, .Շաբաթօրյակ, ծառատունկ, .Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ,	Համագործակցության ոչ բավար աստիճանը, համագործակցելու պատրաստակամության բացակայությունը	Համայնք-Դպրոց-Խորհրդակցական մարմիններ առողջ համագործակցության ապահովման նպատակով խթանող և շահագրգռող միջոցների ձեռնարկում

.Համայնքի ներկայացուցիչների և ծնողների մասնակցությամբ բարեգործական ցուցահանդեսների, միջոցառումների կազմակերպում՝ հասույթը վիրավոր զինվորներին, զոհվածների ընտանիքներին, ծերերին ուղղելու նպատակով		
Սոցիալ-մշակութային դպրոցի հիմնում ՝ .Ստեղծել սպորտային, մշակութային ակումբներ, .Անցկացնել ստեղծագործական շարադրությունների մրցույթներ, .Կազմակերպել նկարչական մրցույթներ և բարեգործական ցուցահանդեսներ, համայնքի և ծնողների ներգրավմամբ և հասույթն ուղղել բարեգործական նպատակների, .Կազմակերպել համերգներ դպրոցում շնորհալի աշակերտների միջոցով, մշակութային ծրագրերով հանդես գալ զորամասերում	Ֆինանսական միջոցների սղությունը, Համապատասխան մասնագետների բացակայությունը Ֆինանսական միջոցների սղության և համապատասխան մասնագետների բացակայության ռիսկերից զատ՝ այլ ռիսկեր մյուս գործողությունների մասով, չկան	Հետևողական միջոցների ձեռնարկում հովանավորչական ծրագրերի իրականացման ուղղությամբ, Հետևողական միջոցների ձեռնարկում համապատասխան մասնագետների ներգրավման ուղղությամբ Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա

Թիվ 7 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը

Խնդիր. Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում

Սահմանված թիվ 7 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	Ռիսկերը	Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները
Անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում	Ֆինանսական միջոցների սղությունը, Աղետների ռիսկերի կառավարման, Քաղաքացիական պաշտպանության պլանների գործնականում կիրառելու կարողության ոչ բավարար աստիճանը, Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ոչ բավարար չափով հարմարեցված և մասնակցային միջավայրի ապահովումը	Հետևողական միջոցներ ձեռնարկել արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ Սահմանված պլաններին համապատասխան ուսումնավարժանքների իրականացում, Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացում
Լաբորատորիաների, առարկայական կաբինետների, հանգստի և ժամանցի պայմանների շարունակական համալրում, արդիականացում (տես նպատակ 1)	Համապատասխան գույքի և նյութերի ձեռք բերման սահմանափակ հնարավորությունները, դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը (տես նպատակ 1-ի ռիսկերը)	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, Հետևողական միջոցների ձեռնարկում արտաբյուջետային միջոցների ձևավորման ուղղությամբ (տես նպատակ 1-ի ռիսկերը մեղմող գործողությունները)
Դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդնում դասապրոցեսում	Մանկավարժական համակազմի որակական բարելավման գործընթացի ոչ բավարար աստիճանը	Մանկավարժության նորագույն նվաճումները ուսուցչին հասանելի դարձնելու գործիքակազմերի և մեխանիզմների մշակում, սեմինարների կազմակերպում, մանկավարժական մեթոդական ընթերցումների ապահովում

Թիվ 8 նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Կրթության որակի բարելավում, չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օժտված երեխաների հետ

Խնդիր.

.Վերջնարդյունքների գնահատում՝ մնացորդային գիտելիքի ստուգում

.Բարձրորակ կրթության, առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում

.Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում

Սահմանված թիվ 8 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	Ռիսկերը	Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները
.Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում .Մնացորդային գիտելիքի ստուգում .Հայտորոշիչ աշխատանքներ .Հարցազրույցներ՝ կրթական կարիքի գնահատման համար	Մեթոդմիավորումների կողմից ուսումնական պլանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ոչ բավարար չափով գործիքակազմերի կիրառում	Աշակերտների առաջադիմության մասին դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում զեկույցների ներկայացում, Առաջադիմության, որակի, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտության ու ձևերի քննարկում
.Անհատական աշխատանք առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների հետ .Աշխատանքային միջավայրի տրամադրում (ընթերցասրահ, համակարգչային լսարան, գրադարան) .Առարկայական մրցույթների, բանավեճերի, քննարկումների անցկացում	Ռիսկեր չկան	Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա

Օտար լեզուների խորացված ուսումնասիրում, սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացում	Օտար լեզուների խորացված ուսումնասիրման համար ոչ բավարար ուսումնական միջավայրի ապահովում	Օտար լեզու սովորող երեխաների համար առանձին բաժնի ստեղծում՝ հագեցած օտար լեզվով գեղարվեստական գրականությամբ, դասագրքերով, ուսումնաօժանդակ ձեռնարկներով
Գրադարանում անգլերեն լեզվով բաժնի ստեղծում (տես նպատակ 1)	Դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը (տես նպատակ 1-ի ռիսկերը)	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում (տես նպատակ 1-ի ռիսկերը մեղմող գործողությունները)

Թիվ 9 Նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում

Խնդիր. Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում

Սահմանված թիվ 9 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Ռիսկերը**	**Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները**
Մեթոդ-կաբինետի վերաբացում, ռեսուրսների համալրում, ժամանակակից գրականության ձեռքբերում	Դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, Կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում՝ նվիրատվական կամ դրամաշնորհային միջոցների տրամադրման նպատակով

Հեռավար դասավանդման հմտությունների զարգացում (ուսուցիչների ինքնակրթություն, սեմինարներ, վեբինարներ)	Ուսուցիչների պասիվությունը	Ուսուցիչների համար մոտիվացնող, խրախուսող միջավայրի ստեղծում
Մենթորական համակարգի ներդնում	Արհեստավարժ մասանագետների բացակայությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ՝ աշխատակազմը համապատասխան մասնագետներով համալրելու նպատակով
Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում, ստեղծում	Արհեստավարժ մասնագետների բացակայություն, միջոցների սղությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ՝ աշխատակազմը համապատասխան մասնագետներով համալրելու նպատակով, դրամաշնորհային ծրագրերի իրականացում
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի ձեռքբերում (տես նպատակ 1)	Ֆինանսական ոչ բավարար միջոցները (տես նպատակ 1-ի ռիսկերը)	Արտաբյուջետային միջոցների ձևավորում, հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերի իրականացում (տես նպատակ 1-ի ռիսկերը մեղմող գործողությունները)
Լաբորատոր սարքերի և սարքավորումների, ուսումնական նյութերի համալրում, արդիականացում (տես նպատակ 1)	Համապատասխան գույքի և նյութերի ձեռք բերման սահմանափակ հնարավորությունները, դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը (տես նպատակ 1-ի ռիսկերը)	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ, ֆինանսավորման աղբյուրների հստակեցում (տես նպատակ 1-ի ռիսկերը մեղմող գործողությունները)
Մեդիագրագիտության վերաբերյալ	Համապատասխան որակավորում ունեցող	Արհեստավարժ մասնագետների և

սեմինարներ, քննարկումներ	մասնագետ-վերապատրաստողների, ծանրաբեռնվածությունը և հասանելիությունը	կազմակերպությունների կողմից սեմինարների և քննարկումների անցկացման ապահովում

Թիվ 10 Նպատակի և դրանից բխող խնդրի լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը, ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողությունները

Նպատակ. Ուսուցիչներին իրազեկել դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին և դարձնել մասնակից դրանցում կատարվող փոփոխություններին

Խնդիր.

.Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը

.Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը

Սահմանված թիվ 10 նպատակի և խնդրի իրագործմանն ուղղված գործողությունները	**Ռիսկերը**	**Ռիսկերը մեղմող հնարավոր գործողությունները**
Իրավական ակտերի լուսաբանում	Ռիսկեր չկան	Ռիսկերի բացակայության պայմաններում ռիսկը մեղմող գործողությունների անհրաժեշտություն չկա
e-draft.am կայքի ներկայացում, հանրային քննարկման դրված ակտերի ներկայացում	Ուսուցիչների պասիվություն	Ուսուցիչների մոտիվացումն ապահովող միջոցների ձեռնարկում
ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում	էլեկտրոնային գործիքակազմի ոչ բավարար հասանելիությունը	Ակտիվ համագործակցության ապահովում ոլորտում կոմպետենտ կառույցների և կազմակերպությունների հետ

8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են, դրանց համապատասխանությունը զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներին ու պահանջներին:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

1.Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,

2.Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,

3.Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,

4.Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,

5.Յուրաքանչյուր գործողության համար մշակված վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատված են խորհրդի կողմից,

6.Յուրաքանչյուր գործողության համար սահմանված հաշվետվությունների ձևեր ու ժամանակացույց, որոնք հաստատված են խորհրդի կողմից,

7.Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,

8.Յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,

9.Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում՝ մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված յուրաքանչյուր գործողության կատարման համար նախատեսում ենք սահմանել հաշվետվության հետևյալ ձևը.

Հաշվետվության ձև

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված յուրաքանչյուր գործողության կատարման վերաբերյալ

N	Միջոցառումը (գործողությունը)	Ակնկալվող արդյունքը	Սահմանված ժամկետը, կատարողները	Կատարված աշխատանքի նկարագրությունը	Սահմանված ժամկետում միջոցառման (գործողության) չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները	Գործողության կատարման արդյունքի գնահատումը (լավ, բավարար, անբավարար)	Նշումներ
1								
2								

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

<<ՀՀ Վայոց ձորի մարզի Վերնաշենի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թվականների զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթները իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի:

Ծրագրի իրագործման արդյունքում անքննելիորեն հասնելու ենք դպրոցի գործունեության հիմնական նպատակի կենսագործմանը, այն է՝ շրջանավարտների որակյալ կրթությունն ապահովելը, 21-րդ դարի կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորումը:

Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխությունների ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ՝ ներքին կամ արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում: